ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 2417-Ա « 28 » հունիսի 2024թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-Ի
N 3637-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

1. Երևանի քաղաքապետի 2023 թվականի նոյեմբերի 6-ի «Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի անհատական կազմը հաստատելու և Երևանի քաղաքապետի 2019 թվականի հունիսի 7-ի N 1881-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 3637-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման հավելվածի 3-րդ կետի 2-րդ սյունակում՝ «Մերի Հարությունյան» բառերը փոխարինել «Դիանա Մարտիրոսյան» բառերով, 3-րդ սյունակում՝ «Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետի տեղակալ» բառերը փոխարինել «Ֆինանսական վարչության եկամուտների ու ծախսերի ծրագրավորման և մոնիտորինգի բաժնի գլխավոր մասնագետ» բառերով.

2) որոշման հավելվածի 4-րդ կետի 2-րդ սյունակում՝ «Վիլեն Արևշատյան» բառերը փոխարինել «Քրիստինե Ավետիսյան» բառերով.

3) որոշման հավելվածի 5-րդ կետի 2-րդ սյունակում՝ «Արմեն Հարությունյան» բառերը փոխարինել «Արման Ջհանգիրյան» բառերով, 3-րդ սյունակում՝ «Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ» բառերը փոխարինել «Եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետ» բառերով:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանի վրա:

3.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ